Հավելված 4
«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-2/18-ԿԱՀՈՒՅՔ» ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-2/18-ԿԱՀՈՒՅՔ-1

ք.Երևան 28/ 09 /2018թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն-ը ի դեմս Արամ Հակոբյան-ի, որը գործում է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ֆոտոն ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Նելլի Պետրոսյան-ի, որը գործում է Ֆոտոն ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3836940.00 (երեք միլիոն ութ հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր քառասուն ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը։

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին։
4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը։ Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները ։

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ։ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը։
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3)։ Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում)։
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը։
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման

արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու

միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է

Հայաստանի Հանրապետության իրավունքը։

---

[1]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| **ՀՀ ազգային անվտանգության ծառայություն** | **Ֆոտոն ՍՊԸ** |
| **Հասցե՝ Նալբանդյան 104** | **Հասցե՝ ք. Երևան, Ռոստոմի 58** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **<<ՎՏԲ-Հայաստան բանկ>>ՓԲԸ** |
| **900011301067** | **16044050085000** |
| **01507079** | **90036001** |
| **Արամ Հակոբյան** | **[illegible] [illegible]ոսյան** |
| ________ /ստորագրություն/ | ________ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
28/09/2018թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-2/18-ԿԱՀՈՒՅՔ ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 9 | 39111270/2 | աթոռակ՝ զինվորական | | Աթոռակ զինվորական հաճարի փայտից: 36x36x45 սմ եզրաչափերով: Նստատեղը 1 սմ նրբատ | հատ | 4000.00 | 720000.00 | 180 | ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N 5 | 180 | 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ախտակից 36x36 սմ և գրաչափեր ով, եզրերը կլորացվա ծ: Ոտքերի բարձրությ ունը 45 սմ, հաստո ւթյունը 5x5 սմ: Ոտքերը ա մրացվում են իրար 2 փայտե գո տիներով: Առաջին գոտին 2 սմ հաստու թյան, 4.5 սմ լայնութ յան, տեղա դրվում է ա նմիջապես նստատեղ ի տակ և ամրացվու մ է նստա տեղին | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մեխերով կամ պտուտակներով: Երկրորդ գոտին 2 սմ հաստության, 2.5 սմ լայնության ամրացվում է ոտքերին առաջին գոտուց 20 սմ հեռավորությամբ, բոլոր միացումները կատարվում են մեխերով կամ պտուտակներով, որոնց գլխամասերը ներանցվում են նրբատախտակի մեջ և մ | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ածիկապա տվում: Աթոռակն ամբողջութ յամբ ներկվում է մոխրագույ ն նիտրոէմ ալով: Տեղ ափոխումն իրականա ցվում է մա տակարար ի կողմից ըստ պատ վիրատուի նշված վայրի: եր աշխիքայի ն ժամկետը 1 տարի: | | | | | | | | |
| 11 | 39111140/2 | աթոռներ | | Աթոռ հաճարի փայտից, մուգ շագա նակագույն երանգներ ով և լաքա | հատ | 8090.00 | 1213500.00 | 150 | հասցեն<br>ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N 5 | ենթակա քանակը<br>150 | ժամկետը<br>15.12.2018թ. | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պատված,<br>փափուկ և<br>ստատեղո<br>վ և<br>թիկնակով:<br>Թիկնակի<br>բարձրությ<br>ունը 45<br>սմ:<br>Թիկնակը<br>կազմված<br>է 3 ճաղից՝<br>յուրաքանչ<br>յուրը 3 սմ<br>այնության<br>, 1.5 սմ հա<br>ստության,<br>30 սմ բար<br>ձրության:<br>Ճաղերը ա<br>մրացված<br>են 2 գոտի<br>ներով,<br>ներքևի<br>գոտին 1.5<br>սմ հաստու<br>թյան, 2 սմ<br>լայնությա<br>ն, վերևի | | | | | | |

գտին 5
սմ հաստո
թյան, 2 սմ
լայնությա
ն,
ծևավոր: Ն
ստատեղ
միագույն`
մուգ մոխր
ագույն
կամ շագա
նակագույն
երանգներ
ի որակյալ
կտորով, ս
պունգապ
ատված 2
սմ ոչ
պակաս
սպունգով
1 սմ հաստ
ության նր
բատախտ
ակի վրա:
Նստատեղ
ը ունի 45
սմ բարձրո
ւթյուն, 45
սմ խորութ

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | յուն, 40 սմ<br>լայնությու<br>ն: Ոտքերի<br>բարձրությ<br>ունը 45<br>սմ, հաստո<br>ւթյունը 2<br>սմ, լայնու<br>թյունը 5<br>սմ,<br>ոտքերը<br>իրար ամր<br>ացված են<br>փայտե<br>գոտիով<br>2.5x2 սմ:<br>Աթոռի բա<br>րձրություն<br>ը<br>թիկնակով<br>կազմում է<br>90 սմ:<br>Ըստ ԳՕՍՏ<br>26800.3-86<br>և ԳՕՍՏ<br>13025.2-85<br>գործառնա<br>կան<br>չափերով: | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Տեսքն ու<br>կտորը<br>Նախապես<br>համաձայն<br>եցնելով պ<br>ատվիրատ<br>ուի հետ: Տ<br>եղափոխու<br>մն իրակա<br>նացվում է<br>մատակար<br>արի<br>կողմից<br>ըստ պատ<br>վիրատուի<br>նշված<br>վայրի: Եր<br>աշխիքայի<br>ն<br>ժամկետը<br>1 տարի: | | | | | | | |
| 17 | 39121500/2 | խոհանոցային պահարաններ | | Կահույքը<br>ամբողջութ<br>յամբ լամի<br>նապատ հ<br>աստությու<br>նը 18 մմ:<br>Կահույքը<br>բաղկացա | հատ | 226401.00 | 905604.00 | 4 | հասցեն<br><br>ք. Երևան,<br>Արին<br>Բերդի 3<br>նրբ. N 5 | ենթակա քանակը<br><br>4 | ժամկետը<br><br>15.12.2018թ. |

ծ է երկու
մասից:
Վերևի
մասը 80սմ
լայնությա
ն, 35սմ խո
րության և
60սմ բարձ
րության
երկու հատ
երկու
դռնանի,
իրենց բռն
ակներով,
մուգ
ապակե ա
րոֆիլներո
վ կախովի
պահարան
՝ բաժանվ
ած շարահ
արկով:
Ներքևի
մասը մեկ չ
ժանգոտվո
ղ
պողպատե
լվացարան
՝ իր չորան

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ոցով,<br>երկու<br>դռնանի պ<br>ահարանո<br>վ՝ 80սմ<br>լայնքով,<br>45 սմ խոր<br>ության:<br>Մեկ պահ<br>արան՝<br>40սմ<br>լայնքով և<br>45 սմ խոր<br>ության,<br>չորս հատ<br>քաշովի ա<br>նվակներո<br>վ<br>դարակով:<br>Երկու<br>հատ երկու<br>դռնանի<br>պահարան<br>բաժանվա<br>ծ մեկ շար<br>ահարկով,<br>յուրաքանչ<br>յուրը՝ 80<br>սմ լայնքով | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | և 45 սմ խ րրության։ ներքևի մասը ամբ ողջությամ բ երեսապ ատված եր եսածածկո վ /столеш ница/, 1 կտորից, 280 սմ երկ արության բ և 60 սմ լայնքով։ Խոհանոցի սեղանը լամինատե պրոֆիլով, 120սմ երկ արության, 60 սմ լայն ության, 72 սմ բարձրո ւթյան, 4 համ աթոռով, պ աստառա պատված | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կտորով և<br>սպունգով,<br>40սմ<br>լայնքով,<br>40սմ երկա<br>րության,<br>45 սմ բար<br>ձրության:<br>Եզրերը և<br>դռները պր<br>ոֆիլներով<br>: Լամինա<br>տը դարչն<br>ագույն, ծի<br>րանագույն<br>կամ մոխր<br>ագույն եր<br>անգներով,<br>գույնը և<br>տեսքը<br>նախապես<br>համաձայն<br>եցնելով պ<br>ատվիրատ<br>ուի հետ: Տ<br>եղափոխու<br>մն իրակա<br>նացվում է<br>մատակար | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | արի կողմից ըստ պատ վիրատուի նշած վայրի: Եր աշխիեքայի և ժամկետը 1 տարի: | | | | | | | | |
| 19 | 39151210/ճեմասրահ 2 ի — ընդու նարանի կահույք | | | Կահույքը ամինատի g. հաստու թյունը 18 մմ, բաղկա ցած երկու մասից: Ներքևի մասում 120 սմ լայնքով, 45 սմ խոր ության, 60 սմ բարձրո ւթյան երկու փակ պահարան , դռներն իրենց բռն | հատ | 15999.00 | 63996.00 | 4 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը | |
| | | | | | | | | | ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N 5 | 4 | 15.12.2018թ. | |

ակներով:
Մի
դարակի
ներքևի
մասը 40սմ
լայնքով,
45սմ խորո
ւթյամբ և
48 սմ բար
ձրության
պահարան
մեկ դռնով,
բաժանվա
ծ դարակա
շարով,
վերևը
40սմ
լայնքով,
45սմ խորո
ւթյամբ և
12 սմ բար
ձրության
բաց
դարակ:
Մյուս պահ
արանը
80սմ
լայնքով,
45սմ խորո

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ւթյամբ և<br>60 սմ բար<br>ձրության,<br>երկու<br>դռնով,<br>իրենց դռն<br>ակներով,<br>բաժանվա<br>ծ երկու դ<br>արակաշա<br>րով:<br>Վերևից պ<br>ահարանի<br>ն ամրակց<br>ված 120<br>սմ լայնքով<br>և 120սմ բ<br>արձրությ<br>ան<br>լամինատ,<br>աջ մասում<br>5 հատ<br>զույգ կախ<br>իչների<br>տեղով,<br>ձախ<br>մասում`<br>80x40սմ<br>չափերի պ | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | րոֆիլապա տ հայելիով և վերևի մասում 20 սմ լայնքով և 120սմ ե րկարությ ան գլխարկի տեղով: Լա մինատը ղ արչնագույ ն, ծիրանա գույն կամ մոխրագույ ն երանգնե րով, գույնը և տեսքը նախապես համաձայն եցնելով պ ատվիրատ ուի հետ: Տ եղափոխու մն իրակա նացվում է մատակար | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | արի կողմից, ըստ պատ վիրատուի նշված վայրի: Եր աշխիքայի և ժամկետը 1 տարի: | | | | | | | |
| | 20 39141300/2 | ճաշասեղ աններ | | Բաղկացա ծ է՝ ճաշաս եղան՝ բացովի, վեց աթոռով: Սեղանը փակ վիճակում 180 սմ, լայնքը 90 սմ, բաց վիճակում 220x90, բ արձրությո ւնը 75 սմ: Սեղանի երեսը ՄԴՖ, լաքա | հատ | 180000.00 | 720000.00 | 4 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N 5 | 4 | 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պատ, պրո Ֆիլապատ , 4 պրոֆիլե ոտքերով: Քանդելու և հավաքելու հնարավոր ությամբ: Աթոռները հաճարի փայտից, փափուկ թիկնակով և նստատ եղով: Աթոռի բա րձրություն ը թիկնակով 92 սմ: Թիկնակի բարձրությ ունը 42 սմ, լայնու թյունը 40 սմ: Թիկնակի | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | փափուկ<br>մասը<br>40x26 սմ,<br>միագույն<br>կտորից: Ն<br>ստատեղը<br>50 սմ բար<br>ձրությամբ<br>, 42 սմ լայ<br>նությամբ,<br>42 սմ խոր<br>ությամբ:<br>Ոտքերի հ<br>աստությու<br>նը 3 սմ,<br>իսկ լայնու<br>թյունը 4<br>սմ,<br>ոտքերը ա<br>մրակցված<br>փայտե<br>ճաղերով,<br>բարձրորա<br>կ<br>սպունգով<br>և կտորով:<br>դարչնագո<br>ւյն, ծիրան<br>ագույն | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կամ մոխր ագույն եր անգներով, գույնը և տեսքը նախապես համաձայն եցնելով պ ատվիրատ ուի հետ: Տ եղափոխու մն իրակա նացվում է մատակար արի կողմից, ըստ պատ վիրատուի նշված վայրի: Եր աշխիքայի և ժամկետը 1 տարի: | | | | | | | | |
| 24 | 39132170/2 | ցուցափեղկեր (պահարաններ) | | Փաստաթղ թերի վահանակ, չափերը՝ ( այնություն | հատ | 10692.00 | 213840.00 | | 20 | հասցեն<br>ք. Երևան, Արին Բերդի 3 | ենթակա քանակը<br>20 | ժամկետը<br>15.12.2018թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ը 90 սմ, եր<br>կարությու<br>նը 110 սմ,<br>պատրաս<br>տված է լա<br>մինատից,<br>հաստութ<br>յունը 0.8<br>սմ,<br>պատից<br>ամրացվող<br>հարմարա<br>նքով, պրո<br>ֆիլապատ<br>: Լամինա<br>տը դարչն<br>ագույն, ծի<br>րանագույն<br>կամ մոխր<br>ագույն եր<br>անգներով,<br>համաձայն<br>եցնելով պ<br>ատվիրատ<br>ուի հետ: Լ<br>ամինատը<br>դարչնագո<br>ւյն, ծիրան<br>ագույն | | | | Նրբ. N 5 | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կամ մոխր<br>ագույն եր<br>անգներով,<br>գույնը և<br>տեսքը<br>նախապես<br>համաձայն<br>եցնելով պ<br>ատվիրատ<br>ուի հետ: Տ<br>եղափոխու<br>մն իրակա<br>նացվում է<br>մատակար<br>արի<br>կողմից<br>ըստ պատ<br>վիրատուի<br>նշած<br>վայրի: Տեղ<br>ափոխումն<br>ու տեղադր<br>ումը իրա<br>կանացվու<br>մ է մատա<br>կարարի<br>կողմից<br>ըստ պատ<br>վիրատուի | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Նշված վայրի: Եր աշխիքայի և ժամկետը 1 տարի: | | | | | | |

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ ազգային անվտանգության ծառայություն**
**Հասցե՝ Նալբանդյան 104**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**900011301067**
**01507079**
**Արամ Հակոբյան**

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**Ֆոտոն ՍՊԸ**
**Հասցե՝ ք. Երևան, Ռոստոմի 58**
**<<ՎՏԲ-Հայաստան բանկ>>ՓԲԸ**
**16044050085000**
**90036001**
**Նելլի Պետրոսյան**

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
28/09/2018թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-2/18-ԿԱՀՈՒՅՔ ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | որի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 9 | 39111270/2 | աթոռակ՝ զինվորական | | | | | | | | | | | | 720000.00 | 720000.00 |
| 11 | 39111140/2 | աթոռներ | | | | | | | | | | | | 1213500.00 | 1213500.00 |
| 17 | 39121500/2 | խոհանոցային պահարաններ | | | | | | | | | | | | 905604.00 | 905604.00 |
| 19 | 39151210/2 | ճեմասրահի — ընդունար | | | | | | | | | | | | 63996.00 | 63996.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անի կահույք | | | | | | | | | | | | | |
| 20 | 39141300/2 | ճաշասեղաններ | | | | | | | | | | | | 720000.00 | 720000.00 |
| 24 | 39132170/2 | ցուցափեղկեր (պահարաններ) | | | | | | | | | | | | 213840.00 | 213840.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ ազգային անվտանգության ծառայություն**

**Հասցե` Նալբանդյան 104**

**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

**900011301067**

**01507079**

**Արամ Հակոբյան**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**Ֆոտոն ՍՊԸ**

**Հասցե` ք. Երևան, Ռոստոմի 58**

**<<ՎՏԲ-Հայաստան բանկ>>ՓԲԸ**

**16044050085000**

**90036001**

**Նելլի Պետրոսյան**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Հավելված N 3
____/___________/2018թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-2/18-ԿԱՀՈՒՅՔ ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ___________ | գտնվելու վայրը ___________ |
| հհ ___________ | հհ ___________ |
| հվհհ ___________ | հվհհ ___________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 9 | աթոռակ՝ զինվորական | Աթոռակ զինվորական | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հաճարի<br>փայտից:<br>36x36x45<br>սմ եզրաչ<br>ափերով:<br>Նստատեղ<br>ը 1 սմ նրբ<br>ատախտ<br>ակից<br>36x36 սմ<br>եզրաչափ<br>երով,<br>եզրերը կլ<br>որացված:<br>Ոտքերի բ<br>արձրությո<br>ւնը 45 սմ,<br>հաստությ<br>ունը 5x5<br>սմ:<br>Ոտքերը ա<br>մրացվում<br>են իրար 2<br>փայտե գո<br>տիներով:<br>Առաջին<br>գոտին 2<br>սմ հաստո<br>ւթյան, 4.5<br>սմ լայնութ<br>յան, տեղ<br>ադրվում է<br>անմիջապ<br>ես նստա<br>տեղի<br>տակ և ամ<br>րացվում է<br>Նստատեղ<br>ին<br>մեխերով<br>կամ պտու<br>տակներո<br>վ: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Երկրորդ գոտին 2 սմ հաստության, 2.5 սմ լայնության ամրացվում է ոտքերին առաջին գոտուց 20 սմ հեռավորությամբ, բոլոր միացումները կատարվում են մեխերով կամ պտուտակներով, որոնց գլխամասերը ներանցվում են նրբատախտակի մեջ և մածիկապատվում: Աթոռակն ամբողջությամբ ներկվում է մոխրագույն նիտրոէմալով: Տեղափոխումն իրականացվում է մատակարարի կողմից ըստ պատվիրատուի Նշված | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վայրի: Երաշխիքային ժամկետը 1 տարի:() | | | | | | | |
| 11 | աթոռներ | Աթոռ հաճարի փայտից, մուգ շագանակագույն երանգներով և լաքապատված, փափուկ նստատեղով և թիկնակով: Թիկնակի բարձրությունը 45 սմ: Թիկնակը կազմված է 3 ճաղից՝ յուրաքանչյուրը 3 սմ լայնության, 1.5 սմ հաստության, 30 սմ բարձրության: Ճաղերը ամրացված են 2 գոտիներով, ներքևի գոտին 1.5 սմ հաստության, 2 մմ լայնութ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | յան,<br>վերևի<br>գոտին 5<br>սմ հաստո<br>ւթյան, 2<br>մմ լայնութ<br>յան,<br>ձևավոր:<br>Նստատեղ<br>ը<br>միագույն՝<br>մուգ մոխր<br>ագույն<br>կամ շագ<br>անակագո<br>ւյն երանգ<br>ների<br>որակյալ<br>կտորով, ս<br>պունգապ<br>ատված 2<br>սմ ոչ<br>պակաս<br>սպունգով<br>1 սմ հաս<br>տության<br>նրբատա<br>խտակի<br>վրա: Նստ<br>ատեղը<br>ունի 45 սմ<br>բարձրությ<br>ուն, 45 սմ<br>խորություն<br>ն, 40 սմ լ<br>այնությու<br>ն: Ոտքերի<br>բարձրությ<br>ունը 45<br>սմ, հաստ<br>ությունը 2<br>սմ, լայնու<br>թյունը 5 | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սմ, ոտքերը իրար ամրացված են փայտե գոտիով 2.5x2 սմ: Աթոռի բարձրությունը թիկնակով կազմում է 90 սմ: Ըստ ԳՕՍՏ 26800,3-86 և ԳՕՍՏ 13025,2-85 գործառնական չափերով: Տեսքն ու կտորը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Տեղափոխումն իրականացվում է մատակարարի կողմից ըստ պատվիրատուի նշված վայրի: Երաշխիքային ժամկետը 1 տարի:() | | | | | | |
| 17 | Խոհանոցային պահ | Կահույքը ամբողջու | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | արաններ | թյամբ լամինապատ հաստությունը 18 մմ: Կահույքը բաղկացած է երկու մասից: Վերևի մասը 80սմ լայնության, 35սմ խորության և 60սմ բարձրության երկու հատ երկու դռնանի, իրենց բռնակներով, մուգ ապակե պրոֆիլներով կախովի պահարան՝ բաժանված շարահարկով: Ներքևի մասը մեկ չժանգոտվող պողպատե լվացարան՝ իր չորանոցով, երկու դռնանի պահարանով՝ 80սմ լայնքով. | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 45 սմ խորության: Մեկ պահարան՝ 40սմ լայնքով և 45 սմ խորության, չորս հատ քաշովի անվակներով դարակով: Երկու հատ երկու դռնանի պահարան բաժանված մեկ շարահարկով, յուրաքանչյուրը՝ 80 սմ լայնքով և 45 սմ խորության: Ներքևի մասը ամբողջությամբ երեսապատված է րեսածածկով /столешница/, 1 կտորից, 280 սմ երկարությամբ և 60 սմ լայնքով: Խոհանոցի սեղանը | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | լամինատ ե պրոֆիլով, 120սմ երկ արության , 60 սմ լայ նության, 72 սմ բար ձրության, 4 հատ աթոռով, պաստառ ապատվա ծ կտորով և սպունգով, 40սմ լայնքով, 40սմ երկ արության , 45 սմ բա րձրության ։ Եզրերը և դռները պրոֆիլնե րով։ Լամի նատը դա րչնագույն , ծիրանա գույն կամ մոխրագու յն երանգն երով, գույնը և տեսքը նա խապես h ամաձայն եցնելով պ ատվիրա տուի հետ։ Տեղափոխ ումն իրակ անացվում | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | է մատակարարի կողմից ըստ պատվիրատուի նշած վայրի: Երաշխիքային ժամկետը 1 տարի:() | | | | | | | |
| 19 | ճեմասրահի — ընդունարանի կահույք | Կահույքը լամինատից, հաստությունը 18 մմ, բաղկացած երկու մասից: Ներքևի մասում 120 սմ լայնքով, 45 սմ խորության, 60 սմ բարձրության երկու փակ պահարան, դռներն իրենց բռնակներով: Մի դարակի ներքևի մասը 40սմ լայնքով, 45սմ խորությամբ և 48 սմ բարձրության | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պահարան մեկ դռնով, բաժանված դարակաշարով, վերևը 40սմ լայնքով, 45սմ խորությամբ և 12 սմ բարձրության բաց դարակ: Մյուս պահարանը 80սմ լայնքով, 45սմ խորությամբ և 60 սմ բարձրության, երկու դռնով, իրենց դռնակներով, բաժանված երկու դարակաշարով: Վերևից պահարանին ամրացված 120 սմ լայնքով և 120սմ բարձրության լամինատ, աջ մասում 5 հատ զույգ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կախիչների տեղով, ձախ մասում՝ 80x40սմ չափերի պրոֆիլապատ հայելիով և վերևի մասում 20 սմ լայնքով և 120սմ երկարության գլխարկի տեղով: Լամինատը դարչնագույն, ծիրանագույն կամ մոխրագույն երանգներով, գույնը և տեսքը նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Տեղափոխումն իրականացվում է մատակարարի կողմից, ըստ պատվիրատուի նշված վայրի: Երաշխիքային | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ժամկետը 1 տարի:() | | | | | | |
| 20 | ճաշասեղաններ | Բաղկացած է՝ ճաշասեղան՝ բացովի, վեց աթոռով: Սեղանը փակ վիճակում 180 սմ, լայնքը 90 սմ, բաց վիճակում 220x90, բարձրությունը 75 սմ: Սեղանի երեսը ՄԴՖ, լաքապատ, պրոֆիլապատ, 4 պրոֆիլե ոտքերով: Քանդելու և հավաքելու հնարավորությամբ: Աթոռները հաճարի փայտից, փափուկ թիկնակով և նստատեղով: Աթոռի բարձրությունը թիկնակով 92 սմ: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թիկնակի բարձրությունը 42 սմ, լայնությունը 40 սմ: Թիկնակի փափուկ մասը 40x26 սմ, միագույն կտորից: Նստատեղը 50 սմ բարձրությամբ, 42 սմ լայնությամբ, 42 սմ խորությամբ: Ոտքերի հաստությունը 3 սմ, իսկ լայնությունը 4 սմ, ոտքերը ամրակցված փայտե ճաղերով, բարձրորակ սպունգով և կտորով: դարչնագույն, ծիրանագույն կամ մոխրագույն երանգներով, գույնը և տեսքը նախապես հ | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ամածայն եցնելով պ ատվիրա տուի հետ: Տեղափոխ ումն իրակ անացվում է մատակ արարի կողմից, ըստ պատ վիրատուի նշված վայրի: Եր աշխիքայի ն ժամկետը 1 տարի:() | | | | | | | |
| 24 | ցուցափեղ կեր (պահ արաններ) | Փաստաթ ղթերի վա հանակ, չափերը՝ լ այնություն ը 90 սմ, երկարությ ունը 110 սմ, պատր աստված է լամինատ ից, հաստ ությունը 0.8 սմ, պատից ա մրացվող հարմարա նքով, պրո ֆիլապատ: Լամինա տը դարչն ագույն, ծի րանագույ ն կամ մո խրագույն | | | | | | | |

| |
|---|
| երանգներ<br>ով, համա<br>ծայնեցնել<br>ով պատվ<br>իրատուի<br>հետ: Լամ<br>ինատը դ<br>արչնագու<br>յն, ծիրան<br>ագույն<br>կամ մոխր<br>ագույն եր<br>անգներով<br>, գույնը և<br>տեսքը նա<br>խապես հ<br>ամաձայն<br>եցնելով պ<br>ատվիրա<br>տուի հետ:<br>Տեղափոխ<br>ումն իրակ<br>անացվում<br>է մատակ<br>արարի<br>կողմից<br>ըստ պատ<br>վիրատուի<br>նշած<br>վայրի: Տե<br>ղափոխու<br>մն ու տեղ<br>ադրումը ի<br>րականաց<br>վում է մա<br>տակարա<br>րի կողմից<br>ըստ պատ<br>վիրատուի<br>նշված<br>վայրի: Եր<br>աշխիքայի<br>ն |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ժամկետը 1 տարի:() | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ապրանքը հանձնեց**

______________________

**ստորագրություն**

______________________

**ազգանուն, անուն**

**Կ.Տ.**

**Ապրանքը ընդունեց**

______________________

**ստորագրություն**

______________________

**ազգանուն, անուն**

**Կ.Տ.**

Հավելված N 3.1
___/__________/2018թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-2/18-ԿԱՀՈՒՅՔ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն -ի (այսուհետ՝ Գնորդ) և Ֆոտոն ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ.________________________ -ին կնքված N____________________________ պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ____________________-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| աթոռակ՝ զինվորական | հատ | |
| աթոռներ | հատ | |
| խոհանոցային պահարաններ | հատ | |
| ճեմասրահի — ընդունարանի կահույք | հատ | |
| ճաշասեղաններ | հատ | |
| ցուցափեղկեր (պահարաններ) | հատ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
|---|---|
| | հայտը Նախագծած ներկայացուցիչ՝ |
| ________________________ | ________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ________________________ | ________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |